

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1948 ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ ԹԻՒ 5-6

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հ. Յ. ԹՈՐՈՍՅԱՆ. - Ս. Եփրեմի իր ճառը «Յայ-
կաներաբար Տեառն» 101

ՏՈՒՑ. Յ. ՏԵՐԴԱՋԱՐԵԱՆ. - Ծովը-ը և Ծով-Գրեակը 105

Dott. Mioni Elpidio. - Inni bisantini inediti
in onore di S. Gregorio d'Armenia 118

ԳՐԱԿԱՆ

ԲԱՐՍԵՂ ՇԱՀԱՊՅԱՆ. - Երեք անտիկ նամակներ 125

Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ. - Աւետիս Ահարոնեան 132

» » - Յակոբ Օշական 137

Շ. ՊՈՏԼԻՔ. - Անհուրիներ (Թրգ. Մ. Աթմաճյան) 117

Léon Capamadjian. - Épitaphe (poésie) 117

ԱՆԱՅԻՍ. - Էջ մը յուշերէս 138

Հ. Վ. Յ. - Օտար լեզու 140

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՅԱԿՈՐ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ. - Հայ կնոջ եղանակն տիպար
մը Տոբա. Լիւսի Կիւլէզեան 128

ՀԱՅԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԽՄԲ. - Իտալիոյ նորընտիր նախագահը՝ Լուիճի
Էինաուդի Ս. Ղազարու մէջ 111

» - Միլիթար Արքայի մահուան տարեկարծի
յիշատակը 143

Հ. Յ. Չ. - Հոգեհանգիստ ողբ. Գուրգէն Աւետիսի
Փարեզի Նաթրը-Տամի մէջ 143

ԽՄԲ. - Պեղծութեան վարձարարի արտաստագէտ
մը՝ Արա-Վրոյր 144

ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ

Հ. Ն. Տ. - «Ժայռերու ժառանգը» Տէրիշ. Սէյնթ
Փօլ. 1947 145

Հ. Վ. Յ. - «Սիրոյ և Կարօտի երգեր» Համա-
գասկ Մեհրապեան, Աթէնք. 1947 145

» » - «Աղբիւր շուշաններ» Նուարդ Օտա-
ճեան - Նազենի Տէր Մեհրապեան. 1947. 146

ՄԱՋԱԳՐԱԿԱՆ

Հ. Ե. Փ. - † Հանգիստ հոգւոյ Հ. Թադէոս Վ.ի
Թումանյան 147

SOMMAIRE

1948 Mai - Juin N. 5-6

PHILOLOGIE

P. Jean Thorossian. - St. Ephrem et son
homélie sur la Transfiguration de
Jésus-Christ 101

Dr. H. Der Gazarian. - Les lacs « Zovk » et
le château « Zov » 105

Dr. Elpidio] Mioni. - Hymnes byzantins
inédits à l'honneur de St. Grégoire
l'Illuminateur 118

LITTÉRATURE

Barsegh Chahbaz. - Trois lettres inédites 125

P. Mesrob Djanachian. - Avédís Aharonian. 132

» » - Hagop Ochagan 137

Charles Baudelaire. - Correspondances (trad.
en arm. par Mme M. Atmadjian) 117

Léon Capamadjian. - Épitaphe (poésie) 117

Anaïs. - Une page de mes mémoires 138

P. V. H. - Langue étrangère (poésie) 140

BIOGRAPHIE

Hagop Kouyoumdjian. - Dr. Lucie Gulézien,
une femme modèle arménienne 128

ECHO ARMÉNIEN

Réd. - Le nouveau Président de la Répu-
blique Italienne, Luigi Einaudi, à
St. Lazare 141

» - L'anniversaire de la mort du Ven.
Abbé Mékhitar 143

P. H. Tch. - Messe de Requiem pour le M.^o
K. Alemchah à Notre-Dame de Paris 143

Réd. - Mort prématurée de l'artiste armé-
nien Ara-Vrouyr 144

RECENSION

P. N. D. - « L'héritier des rochers » par
Devrish. St. Paul, Minnesota, 1947 145

P. V. H. - « Chants d'amour et de nostalgie »
par H. Mehrabian, Athènes, 1947 145

» » - « Lis vivants » par N. Odadjian
et Nazénie Der-Mikaelian. 1947 146

NÉCROLOGIE

P. E. P. - † Mort du Père Thaddée To-
madjian 147

ԲԱՋՄԱՎԵՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՁՐԱԿԱՆ

1843 - 1948

106-րդ ՏԱՐԻ



ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ

ԹԻՒ 5-6

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ս. Եփրեմ եւ իր ճԱՌԷ

ՅԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

(Շար. բազմ. 1948, թիւ 3-4, էջ 53)

Երբ տոնախմբութեան մը յիշատակը
պիտի կատարուէր, խուռն բազմութիւն մը
եկեղեցին կը վազէր՝ լսելու իրենց սիրելի
Հօրը վարդապետական կամ բարոյական
յորդորն ու քարոզը, յաղեցնելու իրենց
հոգւոյն քաղցն ու ծարաւը: Այդ առիթ-
ներուն՝ Ս. Եփրեմ օրուան եւ տօնին խոր-
հուրդէն ներշնչուած, մարդաբանական շունչ
մը ու շնչո մը կը դնէր իր խօսքերուն մէջ,
իր արծիւ մը՝ բուռն խոյանքով կը սա-
ւառնէր դէպի անմատչելի բարձունքներ,
իրեն հետ վերացնելով նաեւ ունկնդիրնե-
րուն միտքն ու հոգին: Այդ պահուն, ա-
նոր աչքերը կը բոցավառէին, անոր դու-
նաթափ աշտերը կը կարմրէին, եւ անոր
խօսքերը՝ զուրկ հելլեն սին պաճուճանք-
ներէ՝ աստուածային օծութեան հմայք մը
կ'ունենային: Բայց յաճախ օրուան տօնին
խորհուրդը բնական օրինակներով կը բա-
ցարէր, իր ունկնդիրներուն իմացական

մակարդակին յարմարցնելով խօսքերը,
ինչպէս ի պատիւ Քրիստոսի Այլակերպու-
թեան խօսած ճառին մէջ, ուր կ'երեւի թէ
ունկնդիրներուն մեծամասնութիւնը մշակ-
ներէ կը կազմուէր. եւ այսպէս կը սկսի
ճառը. «Յերկրէ՝ հնձոց ուրախութիւն ,
յայլուոյ՝ պտուղք ի կերակուր, ի Գրոց՝
վարդապետութիւն կենաց: Երկիր՝ ի մի-
ւում ժամանակի ունի զհունձս, այդի՝ ի
ոււմ ժամանակի ունի զկուլթս, իսկ Գիրք՝ հա-
մախա՛մ մի ունի զկուլթս, իսկ Գիրք՝ հա-
մախա՛մ ընթերցեալ՝ բոլորն զվարդապե-
տութիւն կենարար: Երկիր՝ յորժամ հնձի՝
տոթիւն կենարար: Երկիր՝ յորժամ կթի՝ նուաղի,
սպառի, այդի՝ յորժամ կթի՝ հասկը մեկնո-
րիւք՝ հանապաղ հնձեալ՝ հասկը մեկնո-
ղաց ի նմանէ չպակասեն եւ օրրստօրէ
դաց ի նմանէ չպակասեն եւ օրրստօրէ
կընդիրներուն միտքը, յանկարծ թաբոր

(1) Մատենադրութիւնը Ս. Եփրեմի. Դ. էջ 63.
Վենետիկ. 1836:

լերան ծայրը կը բարձրացնէ զիրենք, օր-
ուան խորհուրդը ներկայացնելու: Քրիս-
տոս արդէն լեռը հաներ է իր երեք աշա-
կերտները, ցոյց տալու անոնց թէ «ո՞վ
է Որդի կամ ո՞րք», եւ թէ ինքը լոկ Եղիա
կամ Երեմիա է՝, այլ նոյնիսկ «Աստուած
Եղիայի», եւ ինքն է «որ սրբեաց զերե-
միա յորովանէ»: Եւ ո՛չ ալ սոսկ մարդա-
րէ մ'է ինքը, այլ «Աստուած մարդաբէ-
ր» որ առաքեաց զնոսա», եւ միանգամայն
«Տէր կենդանեաց եւ մեռելոց, որ հրամայ-
եաց երկնից՝ եւ իջոյց զԵղիա, ահնար -
կեաց երկրի՝ եւ յարոյց զՄովսէս»⁽²⁾:

Ահա՛ թարրը լեռը՝ լոյսերու մէջ սուղ-
ուած, արեւը մթաղանած՝ յաւերժական Ա-
րեւին առջեւ, որուն կ'երկրպագեն հին
Ուխտին երկու լուսաւորները՝ Մովսէս եւ
Եղիա: Հոն՝ ո՛չ հուր, ո՛չ փայլատակներ,
ո՛չ որոտում, ո՛չ շանթիք, ո՛չ ալ փոթո-
րիկ, ինչպէս երբեմն Սինա լեռան ծայրը,
այլ երանական անդորր լուծիւն մը, ուր
կը լսուին միայն ուխտանաւներ ու ալէլուիա-
ներ: Տեսէ՛ք թէ ի՞նչպէս Ս. Հայրը՝ այդ
տեսարանէն յափշտակուած՝ կը ներկայա-
ցնէ ունկնդիրներուն Քրիստոսի Այլակեր-
պութեան խորհուրդը. «Հոն ցըցուց Քրիս-
տոս, կ'ըսէ, իր թաղաւորութիւնը՝ նախ
քան իր մահը, իր աստուածափայլ դէմքը՝
քան թուր ընդունիլը, իր ահեղ դորութիւ-
նը՝ նախ քան կապուիլը, իր անճառելի
փառքը՝ նախ քան անարդուիլը, իր լուսա-
փառ հանդերձը՝ նախ քան իր մերկութիւ-
նը, որպէս զի երբ խաչուի հրեաներէն,
չկարծուի թէ իր տկարութեամբ է՝ որ կը
խաչուի ու կը մեռնի, այլ երկնաւոր Հօրը
հաճութեամբ՝ աշխարհիս փրկութեան հա-
մար: Յոյց տուաւ հոն իր աստուածային
մեծփայլելութիւնը, որ երբ յարութիւն
առնէ՝ չկարծուի թէ իր արդեանց համար
է որ կը փառաւորուի, այլ թէ Աստուած
է յաւերժապէս հաւատար երկնաւոր Հօրը:

(2) Մատենադրութիւնը Ս. Եփրեմի. Դ. էջ 63.
Վենետիկ. 1836:

Հոն կը տեսնեն առաքեալները երկու արե-
ղակներ, մին՝ երկինքը, մոգուեալ, դը-
րեթէ ահաբեկած, միւսը՝ լեռան ծայրը՝
իրենց մօտիկ, անհունօրէն զեղեցիկ ու
պայծառ, որուն ձիւնափայլ ու լուսնոյն
հանդերձը ցոյց կու տայ՝ թէ Քրիստոսի
մարմնոյն անգամներէն է որ կը ծաղի ա-
ստուածութեան փառքը, ուսկից կը շա-
նային առաքեալներուն աչքերը: Հոն մար-
դարէները տեսան առաքեալները, հին կը-
տակարանին առաջնորդները՝ նոր Ուխտին
առաջնորդները, Մովսէս՝ Սիմօն Պետրո-
սը, ան՝ որ ճեղքեց զաւաղանով Կարմիր
ծովը, տեսաւ զայն՝ որ ալիքներուն վրա-
յէն քալեց: Երկնից արքայութեան փա-
կանք ունեցողը տեսաւ զայն՝ որ փափողի
զաւաղանն ունէր, մարդարէներու առա-
ջինը՝ տեսաւ առաքեալներուն զլուխը, նա-
խանձայոյց Եղիան տեսաւ Կեփայեան վէ-
մը: Մովսէս՝ որ «ի սկզբանէ արար Աստ-
ուած զերկին եւ զերկիր» ըսաւ, տեսաւ
Որոտման ուղիին՝ որ «ի սկզբանէ էր Բանն
եւ Բանն էր առ Աստուած» զոչեց: Հին
Ուխտին Կոյսը Եղիա՝ տեսաւ նոր Ուխտին
Կոյսը Յովհաննէս, ան՝ որ հրեղէն կառ-
քով երկինք վերացաւ, տեսաւ զայն՝ որ
Քրիստոսի բոցեղէն լանջին վրայ ինկաւ
փարեցաւ: Այս ոճով կը շարունակէ Ս.
Հայրը իր հիացուցիչ նկարագիրը եւ խոր-
հրդածութիւնները, ցոյց տալով՝ իբր
Քրիստոսի եկեղեցւոյն օրինակ՝ թարրը
լեռը, ուր Մովսէս ու Եղիա յիշեցուցին
առաքեալներուն Քրիստոսի չարչարանքնե-
րը, մահը եւ յարութիւնը, եւ այսպէս նը-
ւիրականացաւ երկու Կտակարաններուն
միութիւնը:

Այն զերաշխարհիկ տեսիլէն յափշտակ-
ուած Քրիստոսի երեք աշակերտները, կ'ու-
զեն վայելել յաւերժապէս լուսոյ, սիրոյ
ու անմահութեան այդ հրաշալի երանական
հանդէսը, եւ Պետրոս կը համարձակի
թախանձել իր սիրելի Վարդապետէն.
«Տէ՛ր, բարւոք է մեզ աստ լինել. եթէ
կամիս, արացցա՛ք երիս տաղաւարս, մի

քեզ, մի Մովսէսի եւ մի Եղիայի»: Հոս
է՛ որ Եփրեմ Քրիստոսի բերանը կը դնէ
այնպիսի խօսքեր, որ կը թուին յիշեցնել
Պետրոսի այն կշտամբանքը, զոր լսեց իր
վարդապետէն՝ նախ քան ելլելը թարրը լե-
ռան ծայրը. «Ե՛րթ յետս իմ, աստանայ...
զի ո՛չ խորհիս դու զԱստուծոյսն՝ այլ ըզ-
մարդկանն», եւ կ'աւելցնէ. «Եթէ աստ մը-
նայցեմք, զրանս մարդաբէրն ո՞վ կատա-
րեացէ, զզրեալսն՝ ծակեցին գճեռս իմ եւ
գոտս իմ ո՞վ վճարեացէ, բաժանեցին ըզ-
հանդերձս իմ ո՞ւմ վայելէ, Ետուն ինձ կե-
րակուր լեղի ո՞ւմ լիցի»⁽³⁾...: Թէ աստ
մնայցեմք, զիարդ շինին եկեղեցիք...
զերկինս զիարդ առնուցուս ինեւ, զո՞վ
կապեցես կամ արձակեցես...: Ո՞վ Շը-
մաւոն, հրաման առեր հաստատել զեկե-
ղեցիս⁽⁴⁾, եւ տաղաւարս ի լեռինս հա-
տատես»...: Եւ ահա լուսաւոր ամպ մը
հովանի կ'ըլլայ անոնց, ու ամպին մէջէն
կ'որոտայ ձայն մը. Դա՛ է Որդի իմ սի-
րելի, ընդ որ հանեցայ, դմա լուարուք:
Այն ահաւոր ձայնին վրայ՝ որ բոլոր լեռը
զոդացուց, Մովսէս իր տեղը կը դառնայ,
Եղիա իր յարկը կը մեկնի, աշակերտները
զետին կ'իյնան սարսափահար, եւ կը մնայ
միայն Յիսուս⁽⁵⁾:

Եւ այսպէս կը շարունակէ Եփրեմ իր
ճառը վարդապետութեն, թէ ի՞նչպէս Քրիս-
տոսի ամենատեղեւ անձին մէջ միացեր էին
անշխարհ միաւորութեամբ երկու բնութիւն-
ները՝ աստուածային եւ մարդկային, ցոյց
տալով նոյնիսկ Աւետարանին խօսքերով,
թէ միեւնոյն Անձը աստուածային՝ մերթ-
մարդկային ու մերթ աստուածային բնու-
թեամբ կը դործէր: Սակայն մեր հրատա-
րակած⁽⁶⁾ Այլակերպութեան ճառին մէջ

(3) Մատենադր. Ս. Եփրեմի. Դ. էջ 66:

(4) Հոս ի՛նչ ծառնալիք կ'աւելցնէ, «յերկրի,
ճերմակաւ, յիշտիս եւ յիշտիս», որ չկայ
բնագրին մէջ:

(5) Մատենադր. Ս. Եփրեմի. Դ. էջ 67:

(6) Տես «Բազմ.» 1927, թիւ 1. էջ 5:

(7) Ճառ ընդդէմ Երեւութականաց. էջ 26-27.
Վենետիկ, 1807:

կը պակսի այդ ամբողջ հատուածը՝ 3-4
էջերէ կազմուած, ուր Ս. Հայրը շատ դե-
ղեցիկ ու համոզիչ փաստերով կ'ապացու-
ցանէ յիշեալ վարդապետութիւնը, «սուրբ
Աստուծոյ կաթողիկէ եկեղեցւոյ վարդա-
պետութիւն» կոչելով զայն: Մեր Յով -
հանէս իմաստասէրն ալ, ճշդիւ հետեւե-
լով Ս. Եփրեմի վարդապետութեան, իր
Ընդդէմ Երեւութականաց ճառին մէջ՝
յայտնապէս կը խոստովանի Քրիստոսի մէջ
երկու բնութիւն. «Յերկուց բնութեանց
երկու (զՔրիստոս), կ'ըսէ, նը-
խոստովանելով (զՔրիստոս), կ'ըսէ, նը-
շանակեցես մարդ միանգամայն եւ Աստ-
ուած»⁽⁷⁾:

Հոս, բնականաբար, պիտի խորհրդածեն
բնութեանցները թէ ինչո՞ւ Ս. Եփրեմ Դ.
զարու կիսուն, — երբ տակաւին Քրիստո-
սի անձնաւորութեան կամ բնութեանց մա-
սին ո՛ր եւ է մոլորութիւն մը չկար, — այն-
պէս ուժեղօրէն կը մաքառի անոնց դէմ,
պէս ուժեղօրէն կը դնեն՝ Քրիստոսի մէջ:
որ մի բնութիւն կը դնեն՝ Քրիստոսի մէջ:
Հարկ է ըսել որ՝ Ս. Վարդապետին ժա-
նանակ, իբր Դ. դարու կիսուն, եղած էր
Ապոլինար Լաուդիկեցին, որ Արիոսի ա-
ղանդը հերքելու համար կը վարդապետէր,
թէ Քրիստոսի մէջ մարդկային բնութեան
բանական կամ իմացական հոգւոյն տեղ
կը բռնէր իր աստուածութիւնը, ուստի եւ
Բանն Աստուած մարդ եղած էր՝ լոկ մարդ-
կային մարմին առնելով եւ ո՛չ կատարեալ
մարդկային բնութիւն, ասով արդէն դուռ
կը բանար Եւտիքիսի մոլորութեան⁽⁸⁾:

Այնտեղի է թէ սոյն ճառը՝ ինչպէս
ուրիշ շատեր՝ տաղաչափաւ դրուած ու
խօսուած է, որուն ամանակաւոր կշիռը
կամ չափը զգալի կ'ըլլայ նոյնիսկ հայ

(8) Մեր Յովհաննէս իմաստասէրն ալ կը դա-
տապարտէ զԱպոլինար, հետեւեալ խօսքերով իր
յիշեալ ճառին մէջ. «Յիմարմիտն այն Ապոլի-
նար՝ զմարդկային ի բաց կրճատեալ՝ եհան ի
մարմնոյն Քրիստոսի զբանական հոգին. ճառ ընդ-
դէմ Երեւութականաց. էջ 36:



8341-65

2464-4: h.

